«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

---

25 մայիսի, 2026 թ. N 6

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13.11.9 կետը՝ Ժողովը որոշում է.

1. Հաստատել Պալատի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը (եզրակացությունը)՝ Պալատի խորհրդի և աշխատակազմի 2025 թվականի գործունեության, ինչպես նաև 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՀԱՅԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների
պալատ» հասարակական
կազմակերպության 2026թ. մայիսի
25-ի ընդհանուր ժողովի N 6 որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025թ. գործունեության վերաբերյալ

Ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) վերստուգիչ հանձնաժողովը (ընտրված 24.05.2025 թվականի հերթական ժողովի կողմից), հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը և ղեկավարվելով Պալատի վերստուգիչ հանձնաժողովի կանոնադրությամբ, իրականացրել է Պալատի 2025թ. գործունեության հաշվետվության, գույքի օգտագործման հաշվետվության և ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում: Դիտարկմանը մասնավորապես ներառվել է.

- Պալատի 2025 թվականի գործունեության հաշվետվությունը,
- Պալատի 2025 թվականի գույքի օգտագործման հաշվետվությունը,
- Պալատի հատուկ և մասնագիտական մարմինների 2025 թվականի գուծունեության հաշվետվությունները,
- Գործադիր մարմնի կողմից ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումներով սահմանված պահանջների կատարումը:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997թ. հոկտեմբերի 18-ին, որպես «Որակավորված հաշվապահների միություն» հասարակական կազմակերպություն, որից հետո 1999թ.-ին վերագրանցվել է որպես «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, այնուհետև 2020 թվականի հունիսին Պալատի ընդհանուր ժողովի որոշմամբ վերանվանվել է որպես «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպություն:

Պալատի առաքելությունն է խրախուսել Հայաստանում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վստահելիությունը օգտագործողների, այդ թվում՝ նաև ներդրողների մոտ: Առաքելությունն իրագործելու նպատակով Պալատը ձգտում է կատարելագործել ՀՀ-ում գործող հաշվապահների և աուդիտորների մասնագիտական կարողությունները՝ որակավորման, շարունակական կրթության, համապարփակ մասնագիտական օժանդակության և որակի հսկողության միջոցով, ինչպես նաև հաշվապահության և աուդիտի պատվիրատուների հետ մշտական փոխադարձ կապի միջոցով:

2020թ.-ին Պալատը հավատարմագրվել է որպես մասնագիտացված կառույց և Պալատին պատվիրակվել են ՀՀ-ում հաշվապահական հաշվառման ու աուդիտորական գործունեութ-

յան ոլորտներում պետական կարգավորման գործառույթներ: Պալատը ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված միակ մասնագիտացված կառույցն է:

Պալատի ղեկավարումն իրականացվում է Պալատի խորհրդի նախագահի կողմից: Պալատի ընթացիկ գործունեության կառավարումն իրականացվում է գործադիր մարմնի կողմից՝ գործադիր տնօրենի ղեկավարմամբ:

Պալատում գործում են հետևյալ հատուկ և մասնագիտական հանձնաժողովները.

1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով.
2. Որակավորման հանձնաժողով.
3. Անդամակցության հանձնաժողով.
4. Աուդիտորական գործունեության հանձնաժողով.
5. Հաշվապահական հաշվառման հանձնաժողով.
6. Հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողով:

Պալատի եկամուտները հիմնականում ձևավորվում են.

- Պալատի անդամների անդամավճարներից.
- Պալատի որակավորման ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացներից և քննություններից.
- Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներից.
- Սկսնակ և գործող հաշվապահների համար նախատեսված այլ դասընթացներից:

Պալատի հիմնական ծախսային հոդվածներն են.

- Անձնակազմի աշխատավարձի գծով ծախսեր.
- Գրասենյակի վարձակալության գծով ծախսեր.
- Կոմունալ և հեռահաղորդակցության գծով ծախսեր.
- Հաշվապահների Միջազգային Դաշնության անդամավճարի ծախսեր.
- Դասընթացների և քննություններ կազմակերպման և անցկացման ծախսեր:

Պալատի հաշվապահական հաշվառումը վարվում է «ՀԾ հաշվապահ 7 (Միջին փաթեթ)» հաշվապահական համակարգչային ծրագրով:

Սույն եզրակացությանը կցվում է Պալատի 2025թ. ֆինանսական վիճակի մասին համախմբ-ված հաշվետվությունը և համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթ-ների մասին համախմբված հաշվետվությունը:

<u>Որոշ նշանակալի դրվագներ Պալատի 2025 թվականի գործունեության վերաբերյալ</u>

2025թ.-ին տեղի է ունեցել Պալատի խորհրդի 24 նիստ, որից 14-ը Պալատի խորհրդի 2025թ. ընտրված կազմով, ընդունվել են 114 լոկալ և անհատական իրավական ակտեր, մասնավորապես՝ հաստատվել են Պալատի 2025թ. բյուջեն ու գործունեության ծրագիրը, 2024թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, ընդունվել են որոշումներ՝ 2 իրավաբանական և 85 ֆիզիկական անձանց՝ Պալատին անդամակցության մասին, հաստատվել են Պալատի հանձնաժողովների նոր կազմերը, գործունեության ծրագրերն ու հաշվետվությունները և այլն:

Պալատի խորհրդի նիստերին խորհրդի անդամների ընդհանուր մասնակցությունը կազմել է մոտ 80%:

2025 թվականին ավարտվել են Որակավորման ծրագրի 5 առարկաների դասագրքերի վերանայման և խմբագրման աշխատանքները: Մինչ այդ համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) STAREP ծրագրի ֆինանսական աջակցությամբ և BPP Learning Media Ltd-ի տրված լիցենզիոն իրավունքի հիման վրա իրականացվել է Որակավորման ծրագրի 5 առարկաների դասագրքերի թարգմանությունը:

ACCA տրամադրել է Պալատի որակավորում ունեցող անձանց 8 առարկաների քննություններից ազատումներ՝ 2022-2026թթ համար:

2025թ. ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել ՀՄԴ ներկայացուցիչների հետ ՀՄԴ լիիրավ անդամակցության գործընթաց սկսելու վերաբերյալ: Այդ շրջանակներում կարևորվում է ՀՀ-ում աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների, մասնագիտական էթիկայի կանոնագրքի, ՖՀՄՍ-ների համապատասխանեցումը միջազգային վերջին թարմացումներին 2026թ. ընթացքում:

Պալատի ՀՄԴ լիիրավ անդամակցության հարցերով 2025թ. մարտին տեղի է ունեցել բարձր մակարդակի հանդիպում Հաշվապահների միջազգային դաշնության գլխավոր տնօրենի և անդամակցության հարցերով պատասխանատու ղեկավարի հետ: Հանդիպման արդյունքում ձեռք են բերվել հստակ պայմանավորվածություններ և

ձևավորվել գործողությունների շրջանակ, որը նախատեսվում է իրագործել առաջիկա տարվա ընթացքում: Հանդիպումների և քննարկումների շարքը շարունակվել է 2026թ.-ին:

2025 թվականին պլանային արտաքին գնահատում է իրականացվել 13 աուդիտորական կազմակերպություններում:

2024 թվականի դեկտեմբերին Պալատը ձեռք է բերել 555 քմ ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածք Երևան, Մոնթե Մելքոնյան 46/2 հասցեում, որի արժեքը կազմել է 377.7 մլն ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: 2025թ.-ին իրականացվել է գրասենյակի վերանորոգումը, կահավորումը, տեխնիկական հագեցվածության ապահովումը և հանձնվել է շահագործման:

<u>Անդամակցությունը Պալատին</u>

01.01.2025թ.-ին Պալատի անդամների ընդհանուր թիվը կազմել է 561, 31.12.2025թ.-ին՝ 626: 2025թ.-ին Պալատի ֆիզիկական անձ անդամների թիվը ավելացել է 85-ով, իսկ աուդիտորական կազմակերպություններինը՝ 2-ով:

2025թ.-ին դադարեցվել է 21 անձանց (4 աուդիտոր, 17 փորձագետ հաշվապահ և 1 աուդիտորական կազմակերպություն) անդամակցությունը Պալատին:

<u>Որակավորման դասընթացներ և քննություններ</u>

2025 թվականի ընթացքում Պալատը կազմակերպել է դասընթացներ որակավորման ծրագրի բոլոր առարկաների գծով: Դասընթացները 2025 թվականի ընթացքում տեղի են ունեցել 2 կիսամյակով: Դասընթացներին մասնակցել են ընդամենը 1039 անձ, այդ թվում Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված 282 անձ, որակավորման քննություններին մասնակցել են 1568 անձ:

<u>Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ</u>

2025 թվականին ՇՄԶ միջոցառում ճանաչելու սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրության վերաբերյալ ուսումնասիրվել է այլ կազմակերպությունների կողմից ներկայացված 120 հայտ, որից մերժվել է 1 հայտ:

2025թ. կազմակերպվել են 55 ՇՄԶ միջոցառումներ, 134 ժամ ընդհանուր տևողությամբ, որոնց մասնակիցների թիվը ընդհանուր 5623 է: 2025թ.-ին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձինք մասնակցել են 46 ՇՄԶ դասընթացի:

Եզրակացություն

Պալատի 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություն է ընտրվել «ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ-ն: Համաձայն աուդիտի եզրակացության՝ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Պալատի ֆինանսական վիճակը և գործունեության ֆինանսական արդյունքները՝ համաձայն ՓՄԿ ՖՀՄՍ-ների:

Վերստուգիչ հանձնաժողովի կողմից ստուգվել է Պալատի կողմից 2025 թվականին կատարված ծեռքբերումների և իրականացված ծախսերի հիմնավորվածությունը, հաշվեգրված եկամուտների ճշգրտությունը ինչպես նաև 2025 թվականի տարեկան բյուջեի կատարողականում ներառված տվյալների ճշգրտությունը: Ստուգման արդյունքում էական անճշտություններ և բացթողումներ չեն հայտնաբերվել:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգել է նաև Պալատի 2025 թվականի գործունեության հաշվետվությունը, Պալատի 2025 թվականի գույքի օգտագործման հաշվետվությունը, Պալատի հատուկ և մասնագիտական մարմինների (հանձնաժողովների) 2025 թվականի գործունեության հաշվետվությունները, և գործադիր մարմնի կողմից՝ ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումներով սահմանված պահանջների կատարումը, որոնց արդյունքում էական անճշտություններ և բացթողումներ չեն հայտնաբերվել:

Վերստուգիչ հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Հակոբյան

Անդամներ՝

Անի Խաչատրյան

Արթուր Հարությունյան

Աննա Չալյան

Լավրենտի Պողոսյան